ծոց՝ յաւիտեանս յաւիտենից․
ամէն։

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի․
Բան․ խա։

Որդի Այ կենդանւոյ, օրհ-
նեալդ յամի, հօրդ ահաւո-
րի անքննելին ծնունդ․ որ տը-
կարանայ առ՚ի քէն և ոչ յինչ։
որ ՚ի ծագել անստուեր նը-
շուլից ողորմութենդ քո փա-
ռաց, հալին մեղք․ հալա-
ծին դևք․ ջնջին յանցանք․
խզին կապանք․ խորտակին
շղթայք․ կենդանածնին մա-
հացեալք․ բժշկին հար-
ուածք․ ողջանան վէրք․ բառ-
նին

նին ապականութ՟իք · տեղի
տան տխրութ՟իք · նահան-
ջին հեծութ՟իք · փախնու խա
ւարն · մեկնի մէգն · մերժի
մառախուղն · փարատի մը-
ռայլն · սպառի աղջամուղջն ·
վերանայ մութն · գնայ գի-
շերն · տարագրի տագնապն ·
չքանան չարիքն · հալածին
յուսահատութ՟իքն ։ Նւ Թա-
գաւորէ ձեռն քո , ամենա-
կալ քաւիչդ ա՟մի · որ ոչ ե-
կեր կորուսանել զմարդկան
հոգիս , այլ կեցուցանել · Թո՛ղ
ինձ զանԹիւ չարիսն իմ , բա
զում ողորմութ՟բ քո · զի դու
միայն ես յերկնի անճառ , և
յերկրի անզննին · 'ի տարր
գոյից՝ և յեզր ծագաց աշ-
խարհի · սկիզբն ա՟մի և յա՟մի ·
ա՟մ լրմամբ օրհնեալդ 'ի
բարձունս , և քեզ ընդ հօր ,

եւ հոգւոյդ սրբոյ վայելէ փառք
յաւիտեանս . ամէն :

## Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն . ՂԳ :

Տէր յաւիտենական, բարերար, եւ ամենակալ . ստեղծիչ լուսոյ, եւ յօրինիչ գիշերոյ . կեանք 'ի մահու, եւ լոյս 'ի խաւարի : Յոյս ակնունողաց, եւ երկայնմտութի՛ւն տարակուսելոց . որ ամենարուեստ իմաստութեամբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու : Անուաղ ծագումն, եւ անմուտ արեգակն : Քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ . որում կրկնի ծունր երկրպագութեան ա̃մ եղելոց, երկնա-

ւո-

ւորաց , և երկրաւորաց , և
սանդարամետականաց . որ լը-
սես զհեծութիւն կապելոց , և
հայիս յաղօթս խոնարհաց ,
և ընդունիս զխնդրուածս նց :
Ած իմ , և Թագաւոր իմ .
կեանք իմ , և ապաւէն իմ .
յոյս իմ , և վստահութիւն
իմ , յս քս ածդ ամի : Ածդ
հանգուցեալ 'ի հոգիս սրբոց :
Մխիթարութիւն վշտաց , և
քաւարան մեղուցելոց . որ գի-
տես զամ յառաջքան զլի-
նել նց . առաքեա զպահպա-
նողական զօրութիւն աջոյ քո .
և փրկեա զիս յերկիւղէ գի-
շերի , և 'ի դիւէ չարէ : Աղ
զի զյիշատակ սոսկալի , և ամբ
քո անուանդ միշտ համբուրեալ
րեալ շրթամբք հոգւոյ ըղ-
ձութեն չնչոյ կեցից պահպա-
նեալ ընդ այնոսիկ որ կար-

դան զքեզ 'ի բոլոր սրտէ . և
'ի դրոշմէ խաչի քոյոյ նշա_
նիդ , զոր ա̅ծային արեամբդ
քո ներկեալ նորոգեցեր . և 'ի
նոյն շնորհ որդեգրութե̅ զմեզ
մկրտեցեր . և 'ի փառս պատ_
կերի քոյ նկարեալ յօրինեցեր .
Յայսու պարգևօք ա̅ծականօք
ամաչեսցէ սատանայ . քակտես
ցին մեքենայքն . բարձցին որո
գայթքն . պարտեսցին մարտու
ցեալքն . պակասեսցին զէնքն
սայրասուրք . մերժեսցի մէգն .
փարատեսցի խաւարն . մեկնես
ցի մառախուղն . բազուկ քո
հովանասցի , և աջ քո կնքես_
ցէ . Ո̅ զի գթած ես , և ո_
ղորմած . և անուն քո կոչե_
ցեալ է 'ի վ̅ր ծառայից քոց .
Եւ քեզ ը̅ն հօր, հոգւովդ սրբով
փառք , իշխանութի̅ , յաւի_
տեանս յաւիտենից . ամէն .

Աղօթք

## Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ առ ս̄բ ա̄ծածինն . Զ .

Ե. արդ՝ 'ի վերայ այսքանեաց յուսահատութեանց, և անհարկու սըր տաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, ա̄ծային բարկութեանց, տագնապեալ հոգւով թախծութեան իսպառ : Ա. ղաչեմ զքեզ ս̄բ ա̄ծածին . հրեշտակ 'ի մարդկանէ . մարմնատեսիլ քերովբէ . երկնաւոր արքայուհի . անխառն իբր զօդ . մաքուր ո̄պ զլոյս : Անշաղախ ըստ նմանութե̄ պատկերի արուսեկին բարձրութե̄ : Գ.երազանց քան զբնակութե̄

անկոխելին սրբութեանց։ Դրէ
նաւոր խոստմանն տեղի. ե-
դեմ չնչական. ծառ կենացն
անմահից, բուրեղէն սրովն պա-
րունակեալ։ ՚Ի բարձրեալն
հօրէ զօրացեալ, և հովանա-
ցեալ։ Հանգստեամբ հոգ-
ւոյն հանդերձեալ, և մաքրա
գործեալ, Նախութբ որդ-
ւոյն յարդարեալ, և տաղա-
ճարեալ։ Միածինն հօր, և
քեզ անդրանիկ։ որդի քո
ծննդեամբ, և մեր արարչու-
թբ։ Ընդ անախտ մաքրու-
թեդ՝ և ամբիծ բարի։ ընդ
անարատ սրբութեդ՝ և խնա-
մակալ բարեխօս։ Ընկա՛լ ըզ
մաղթանս այսր աղերսանաց
քում դաւանողիս։ Դու մա-
տո՛ ընծայեա՛ ընդ սմին խառ-
նեալ զբանն իմ նախանձի մե-
ծիդ ներբողի ՚ի քոյդ պաղա-
տանս։

տանս ։ Հիւսեա՛ միայն զմե_
ղուցելոյս դառն հեծութիւն
ընդ քումդ երջանիկ, և խն_
կաւորէ հայցուածոյ՝ տունկդ
կենաց պտղոյն օրհնութե ։
Որ 'ի քէն միշտ օգնեալ, և
բարեգործեալ, և 'ի մաքրա_
կան քո ծնելութիւնդ ապաւի_
նեալ և լուսաւորեալ՝ կեցից
քսի որդւոյ քոյ, և ամն ։
Օժանդակեա՛ թևոցդ աղօ_
թիւք խոստովանեալ մայրդ
կենդանեաց ։ Եւ յելիցն իմ
յերկրէս հովտէ առանց ըղ_
կանաց հետևիլ 'ի կեանս օթ_
ևանայդ պատրաստութե ․ զի
թեթևասցի կատարածն իմ
ինձ ծանրացելոյս անօրէնու_
թբ ։ Արասցես տօն ինձ քերկ_
րութե զօրն իմ տագնապի՝
ողջացուցիչ երկանցն եհայի ։
Բարեխօսեա՛, խնդրեա՛, աղա_

չեա՛ւ. զի ըստ անճառելի մաք-
րութեդ՝ և աՀա զբանիդ Հա-
ւատամ՝ զընդունելութի։ Ս՛ր
տասո՛ւօք օգնեա՛ փառանգեցե-
լոյս՝ գովեա՛լդ ՚ի կանայս։
Ո՛ւնր խոնարՀեցո առ իմ
Հաշտութի՝ ծնօղդ այ։ Ընդ
իմում թշուա՛ռութիս Հոգա՛, խո-
րան բարձրելոյն։ Ջեռն տուր
անկելոյս՝ տաճար երկնային։
Փառաւորեա՛ զորդիդ քո ՚ի
քեզ՝ ամծօրէն ինձ Հրաշագոր-
ծել քաւութի և ողորմութի՝
աղախին այ և մայր. բարձ-
րացի պատի՛ւ քո ինև, և
ցուցցի փրկութի իմ քև։ Եթէ
զիս գտցես տիրամայր. թէ
ինձ ողորմեսցիս սրբուՀի. թէ
զկորուսեալս շաՀեսցիս՝ անա-
րատ. թէ զՀարթուցեալս յան-
ձանձեսցես՝ երջանիկ. թէ զա-
մաչեյեալս յառաջ մատուս-

ցես՝

ցես՝ բարեշնորհ. Թէ յուսա-
հատելոյս ինձ միջնորդեցես՝
միշտ սբ կոյս. Թէ զմերժեալս
ընտանեցուցես՝ մեծարեալդ-
յոյ. Թէ յիս ցուցցես զգթա-
ծութիւն՝ լուծիչդ անիծից.
Թէ զծփեալս հաստատեսցես՝
հանդիստ. Թէ ՚ի խռովունեցս
յուզմանց փոխեսցես զիս՝ խա-
ղաղարար. Թէ վրիպելոյս ինձ
հնարաւորեսցես՝ գտեալ. Թէ
վն իմ մտցես ՚ի հանդէս՝ մա-
հու նահանջիչ. Թէ զդառ-
նութիս իմ անուշեսցես՝ քաղ-
ցրունի. Թէ զբաժանման իմ
խորոց քակտեսցես՝ հաշտու-
թի. Թէ զանմաքրութիս իմ
բարձցես՝ եղծման ընդունիչ.
Թէ զմատնեալս մահու փըր-
կեսցես՝ կենդանի լոյս. Թէ
զլալեացս ձայն հատցես՝ բերկ-
րութի. Թէ զխորտակեալս

կազդուրեսցես՝ դեղ կենաց։
Թէ 'ի կործանեալսս յիս ակն-
արկեսցես՝ հաճելից. Թէ ողոր-
մութ ինձ պատահեսցէս՝ կտակ
նուիրեալ։ Օրհնեալ միայն
'ի շրթունս ամբիծս լեզուաց
երջանկաց։ Նա կաթիլ մի
կաթին՝ քումդ կուսութեան՝
յանձն իմ անձրևեալ՝ կենաց
ինձ զօրէ։ Մայրդ բարձրելոյ
ածն յնի՝ արարչին երկնի, և
բնաւին երկրի։ Օ որ անձա-
ռապէս ծնար բովանդակ մար-
մնովն, և համայն ածութբն.
որ փառաւորեալ է ընդ հօր,
և հոգւոյն սրբոյ՝ էութբ, և
անքննութբ մերոյին բնութբ
միացելով՝ յամ, և յամմ.
մի յերրորդութեն. նմա փառք
յաւիտենից յաւիտեանս.
ամէն։

Նշէր

Սրբոյ երանելոյն [illegible] արքի եպիսկո-
պոսին եկեղեցւոյ Ներսէսի
Լամբրոնացւոյ ասացեալ։

Աղերս մաղթանաց՝ խօսք ընդ Յի-
սն։

Այլ դու նայեաց յիս ա-
մենակարողդ տէր իմ յն,
յանթառամ փա-
ռացդ՝ և շնոր-
հաց, տալով անարժան քո
ծառայիս զմխիթարով միտս՝ 'ի
յոյս հանդերձեալ քոյ յա-
սոյդ։ Տես տէր թէ որքան
վտանգիւք յաղցաւոր կենացս
կրից 'ի զանազան հողմոց չարա
բեր շնչմանց երերալեալս եմ

աս

ռովութե , թշուառացեալ
մնացի երեւեալ ։ Զունիմ
տէր , պտուղ գործոց քեզ
նուէր հաշտութեան ․ քանզի
զոր ունել կարծէի՝ մաշեալ
պակասեաց՝ 'ի քում ահաւո-
րութենդ եկեալ դիտութն ։
Այլ ես մերկ՝ և թափուր , կի-
սամեռ՝ և ոգեկործան միայն
զմարդասիրութե ոտիցդ կա-
խիմ , բուռն հարեալ զդմանէ ․
և ոչ երբէք զթողութն ախոր-
ժեմ ։ Հա՛ն զիս 'ի չարս շաւ-
ղաց , զորս բերանով իմով
աղարտեմ ։ Այլ ուսո՛ զճանա-
պարհս քո ուղիղս , որում կա-
մօք սրտիս վկայեմ ։ Ընկայ
'ի մահիճս մեղաց , և ես խն-
ձէն զգարշութի մեղացս բո-
ղոքեմ ։ Տո՛ւր զբժշկութիւն
ախտացելոյ հոգւոյս , որ սաստ-
ջացուցանել զայնս խաբեմ ։

Ուխտս

Ուխտս հոծեալս բանի յե-
կեղեցւոյդ անդրանկաց առաջին
ծմ երկիւղածաց քոյ նուի-
րեմ ։ Կերիցեն տնանկք , և
յագեսցին ՚ի սմանէ , և օրհ-
նեսցեն զքեզ , որ զՏէրդ խնդ-
րեն ։ Ո՛ աղօտացեալ քո լոյս
բարեկամացն քոյ ցուցանեմ .
յիշեսցեն սովաւ , և դարձցին
առ Տէր՝ որք ՚ի ծագաց երկ-
րէ քումդ գիտութեն փափա-
գին ։ Քեզ փառք՝ պարծանք
և գրաւ աշխարհի՝ ՚ի յերկինս
փառաւորեալ , յաւիտեանս
յաւիտենից ։

Աղջւ աղերսւ մաղթանաց նորին ներ-
ռէսւն առ ամ̃ հոգին ած։

Ո՛վ տէր՝ և դաստիարակ, հեղ՝
և խնամօղ ած իմ հոգւի, շըն
չեա՛ 'ի մըրկեալ ծովս խորհըր-
դոյս զախուգ շնորհիդ՝ որով
խաղաղի, և ոչ միշտ երախ-
տիւք քո ստայար զիս քեզ
պարտական գուեստի, լի՛ց և
այժմ զաերան իմ օրհնու-
թե՛ տե՛ր ցնծալի։ Թէպէտ
և եմ անարժան տաձար լի-
նել քումդ հանգստի, այլ
դու առաստ ա՛ռ միայն գործի
հնչման քո ձայնի։ և զան
ձառ խորհրդոյ քոյ հանձար
տարփալի, բացեալ փայլեցո՛
խնդրողաց նորին առաջի։ 'Ի
փառս պատուոյ մեծի քոյ ան
ուանս [illegible] սիրելի, և ինձ կե-

տան

տամբանս բարբառ բերանոյս
ժխտող ծառայի ։

Նորին Ներսէսի Լամբրօնացւոյ ասա-
ցեալ ՚ի մեկնութե. սաղ. կէ ։

Աղօթք անձին. որ ՚ի փորձութե ելէ,
կամ ՚ի վիշտս ։

Այլ շուրջ պատեալ ՚ի տա- րակուսանացս յամ կողմանց սրտիւ շաղախեալքս, եւ ուն- կնդրութե կարօտեալքս՝ նայիմք առ քեզ փորձ տկար բնութեա քահանայապետդ մր ։ Դու որ վասն մեր մեղս եղեր, զի մեք լիցուք վասն քո արդարու- թիւն ։ Դու որ վն մեր երկրա- ւոր եղեր, զի մեք լիցուք վն քո երկնաւորք ։ Դու որ վասն մեր

մեր հաց եղեր, զի մեք 'ի ճա
շակելն զքեզ՝ սրբեսցուք ·
Տո՛ւր զպարարեալ վշտօք մար
մինս քո՝ ա̃մ սրտի սրբարար
կերակուր · Մատռուակեա՛ զա
րեան քո վտակ անմեղ կայ
լակեալ՝ որդւոց մարդկան ան
մեղութե̃ զմաքրութի̃ ։ Զգեա՛
զփրկական քո զխաչդ զօղէ-
լոցս 'ի ծով աշխարհիս առ
քեզ վերածիչ · Կարօտացաք
շնորհի՝ սփռեա՛ · Լքաք 'ի գոր
ծոց՝ քաւեա՛ · Խա՛րխափեմք
զխաւար՝ ճառագայթեա՛ ։ Կոր
ծանեցաք 'ի հաւատոյ՝ հաս-
տատեա՛ ։ Դու ես յոյս, դու
ես լոյս · դու ես կեանք, դու
ես քաւութի̃ · դու ինքն և
անմահութի̃ ։ Քեզ սպասեն
յեցեալքս 'ի շնորհս քո ։ 'Ի
քէն կարօտին առնուլ փըր-
կութիւն խառնեալքս 'ի մար
մինդ

մինչ քո։ Օ՛քեզ ունին քա-
ւիչ քահանայ՝ գնեալ արեամբ
հօտս քո։ Հայեաց յամենե-
սեան։ Ափուեա՛ զտարակու-
սանս մեր քոյին վաստակովքդ։
Հանդարտացո՛ զխռովութիւ
մեր՝ քոյին խաղաղութեամբդ։
Հանգո՛ զաշխատանս մեր ՚ի
քո օթեվանսդ. ուր դու գը-
նացեր ո՛վ Տէր, և խոստացար։
Արժանացո՛ զքոյս՝ փառաւո
րել զքեզ այդր ընդ հօր, և
ը̄ սբ̄ հոգւոյդ յաւիտեանս.
ամէն։

Սորին Ներսիսի աղօթք առաջեալ առ խաչելեալն յս։ Ի ժեշնութէ աղն. Ճխք. 7։

Առ քեզ ակնարկեմ, աղբիւր ջրոյ կենդանւոյ, և աղաղակեմ, թէ ընդէ՞ր է ինձ սրբութեն ծարաւիլ, երբ դու ես իմ սրբութի՞ն. կամ ընդէ՞ր փափաքիմ մաքրութեն, մինչ դու ես իմ մաքրութի՞ն։ Այսու հետև ուսեալ, եթէ դու ես իմաստութի՞ն մեզ յայ տուեալ, արդարութի՞ն, և սրբութի՞ն, առ քեզ ծարաւիմ, քեզ փափաքիմ, քեզ տոփամ. տո՛ւր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ զովացուցիչն աղբիւր ջրոյ կենդանւոյ խաղացելոյ ՚ի կեանս յաւիտենից. Ծարաւիմ ըմպել

պել 'ի կրկին վտակաց կողիդ, որով և սրբեալ սիրով քո ըղձայլիմ։ Քաղցնում ուտել զմարմինդ, որով կենդանացեալ անմահ ես լինիմ։ Փափաքիմ ողջագուրել զխոցուած ձեռացդ, որով հասեալ առ քեզ պսակիմ։ Տռփամ ակնարկել զդէմսդ, որոյ ապտակաւն 'ի վիրաց իմոց բժշկիմ։ Աղաղակի լո՛ւր ինձ տէր, զի՛ նուաղեալ յինէն հոգի իմ։ Նուաղեցաւ հոգի իմ 'ի քո անձկաւոր սիրոյ։ Տոչորեցայ յառ քեզ տռփանացդ ո՞վ Յս իմ խաչեալ։ Թալկացայ յորժամ առ քեզ ակնարկեմ ո՛վ վն իմ ապտակեալ։ Եւ աղաղակեմ, ցո՛յց ինձ զդէմս քո. լսեցո՛ ինձ զբարբառ քո. զի ձայն քո քաղցր է, և դէմք քո գեղեցիկ։ Երբ եկից երևե-

րևեցայց քեզ ։ Որդ՝ լո՛ւր ինձ, և արբեցո՛ զիս վաղվաղակի քո գիտութե̃դ և սիրով․ զի և յինէն, որ հաւատամ'ի քեզ, բղխեսցեն աղբիւրք ջը րոց կենդանութե̃ն ։





Խաչելութ̅ի տ̅ն մերոյ։

## Աղօթք առ ամենասուրբ կոյսն մարիամ ածածին։

առաւօրեալ և ամե-
նօրհնեալ որբուհի միշտ
կոյս ածածին մարիամ
բարեխօսեա վասն իմ
մեղաւորիս առ միածին որ-
դին յս քս տէրն մեր, զի զօ-
րութբ որդոյ պատարագիս,
զոր դառնակսկիծ չարչարա-
նօք իւրովք սահմանեաց 'ի
փրկութի հոգւոյ իմոյ՝ ողորմես
ցի ինձ, շնորհելով զթողութի
ամ մեղաց իմոց՝ յորոց լցով
սրտիւ զղջամ, և յառաջագր
եմ այլ ոչ ևս մեղանչել, միջ
նորդութբ իւր ամենազօր օգ-
նութե. ամէն։

Նշանակութիւնք խորհրդոց սբ̄յ պատա-
րագին ՚ի վերայ չարչարանաց
տն̄ մերոյ յս̄ի քս̄ի ։

## Աղօթք ։

Տ̄Ր իմ յս̄ քս̄ որ վասն փր-կութե̄ մերոյ հաստատեցեր զխորհուրդ ս̄բ պատարագիս ՚ի յիշատակ չարչարանաց քոց․ աղաչեմ զքեզ, տո՛ւր ինձ այն քան շնորհս եւ օգնութի̄, զի կա-րացից միտադրութե̄ լսել ըզ-նա, եւ նովաւ շահիլ զպտուղ չարչարանաց քոց․ ամէն ։

Քահանայքն երկնաւըն 'ի սեղանն նշա
նաւէ շնորհի երկնաւըն 'ի պարտէզն։

## Աղօթք։

Տէր իմ յս քս որդի այ կեն-
դանւոյ՝ որ 'ի մերձենալ ժա-
մու չարչարանաց քոց սկսար
տրտմիլ և տխրիլ, շնորհեա
ինձ, զի յօժարութբ համբե-
րեցից ամ նեղութեց իմոց
վասն սիրոյ քո, որ ես ած
սրտի իմոյ, և զօրութն չար-
չարանաց քոց եղիցի ինձ
փրկարար։ ամէն։

Քահանային առանձին սպասաւորացն նշանակէ Տ՟ռն աղօթելն ՚ի մէջ պարտիզին ։

## Աղօթք ։

Տէ՛ր իմ յ՟ս ք՟ս որդի ա՟յ կենդանւոյ , որ աղօթելով ՚ի մէջ պարտիզին կամեցար զօրանալ ՚ի հրեշտակէ , շնորհեա ինձ , զի զօրութ՟ ս՟բ աղօթից քոց հրեշտակն քո միշտ օգնեսցէ ինձ յամ՟ աղօթս իմ.

ամէն ։

Քահանայն յորժամ տայ պխտապտղն
նշխն նշանակէ պտղէ անձանձնն
՚ի վերայ երեսաց և պտղոյ
նշին աղօթէ ։

## Աղօթք ։

Տէր իմ յս՜ քս՜, որ աղօթելով քոյ ՚ի մէջ պարտիզին առ հայրն երկնաւոր ՚ի սաստիկ տրտմութենէդ հոսեցեր զքրտունս արեան յոյժ երակաց քոց՝ շնորհեա՛ ինձ, զի և ես յիշելով զչարչարանս քոյ հանապազ հեղից յաչաց իմոց զաղբիւրս արտասուաց. ամէն ։

Քահանայն յորժամ եղանէ 'ի բեմն և համբուրէ զնա, նշանակէ յորժամ քս գնաց 'ի դէմ յուդայի, և համբուրեալ մատնեցաւ 'ի նմանէ։

## ԱՂՕԹՔ

Տէր իմ յս քս որ յանձն առեր համբուրիւ մատնիլ 'ի յանօրէն յուդայէ. շնորհեա ինձ, զի մի երբէք մատնեցից զքեզ, այլ զի սիրեցից և բարի արարից ամենից զրպարտողաց և հալածչաց իմոց. ամէն։

Սրահամայէն գնալն 'ի գերէն նոյնժմ նշանակէ զքսի կապելն 'ի հրէից։

Աղօթք։

Տէր իմ յս քս, որ յանձն առեր կապիլ 'ի հրէից, աղաչեմ զքեզ՝ արձակեա զիս 'ի կապից մեղաց իմոց, և կապեա զիս կապանօք ամենասուրբ օրհնեաց քոց. որպէս զի ամ զօրութբ հոգւոյ և մարմնոյ իմոյ կարացից քեզ անդադար ծառայել. ամէն։

Քահանայն յորժամ առնէ պճամա_
մուտն , նշանակէ զերթն ապրո
ներքն 'ի տան քահանայապե
տին Աննայի :

## Աղօթք :

Տէր իմ յս՜ քս՜ որ յանձն ա_
ռեր դատել երբեւ զմեղա_
պարտ առաջի քահանայապե_
տին Աննայի եւ անիրաւաբար
ապտակիլ 'ի ծառայէ նորին ,
շնորհեա՛ զի մի՛ երբէք անկայց
'ի մեղս , այլ շնորհ հոգւոյդ
սրբոյ զիս միշտ զօրացուսցէ 'ի
պահել զպատուիրանս քո :

Քահա_

Քահանայն յորժամ ասէ՝ Տէր ողորմեա,
նշանակէ զպետրոսի ուրանալն
զոր ՚ի տան քահանայապետին
երին հայհոյեաց .

## Աղօթք .

Տէր իմ Յս Քս որ ՚ի տան կայիափայի երիցս անգամ ուրացեալ եղեր ՚ի պետրոսէ վիմէդ, ազատեա զիս յընկերութ՟է ամբարիշտ մարդոց, զի մի ըստ չար օրինակի նոցին և ես գործելով զմահացու մեղս, ՚ի քէն հեռացայց . ամ՟ն:

Քահա-

Քահանայն յորժամ խաղաղութիւն տայ
ժողովրդեանն, նշանակէ զսէր
հայելն 'ի մեծարոս, և զնա
իւր ողջունիւն ։

Աղօթք ։

ՏԷՐ իմ յիսուս քրիստոս, որ հայելով 'ի մեղուցեալն պետրոս բղխեցուցեր յաչաց նորա զարտասուս ապաշխարութեան, շնորհեա և ինձ հանապազ լալ զմեղս իմ, և ոչ ևս երբէք զքեզ բարկացուցանել մեղօք իմովք, որ ես Աստուած իմ, և բարութիւն իմ, ամէն ։

Բնականայն յորժամ կարդայ զաղօթս, և զգիրսն՝ նշանակէ զտեղն ածելն առ գիշերաս։

## Աղօթք։

Տէր իմ յս̃ քս̃, որ յանձն ա-
ռեր գնալ յատեանն պիղա-
տոսի, և առաջի նորին դա-
տիլ և ամբաստանիլ, ուսո՛
ինձ աղաչեմ զքեզ յաղթա-
հարել զա̃մ նենգութի̃ւ ամ-
բարիշտ մարդոց, և միշտ բա-
րի գործովք դաւանիլ զամե-
նասուրբ հաւատ քո. ամէն։

Քահանայն յորժամ ՚ի մէջ սեղանոյն աղօթէ ձայն կարդալոյ զաւետարանն, նշանակէ զՔ͞սէ տանելն առ Հերովդէս։

## Աղօթք։

Տէր իմ Յ͞ս Ք͞ս, որ առաջի Հերովդէի համբերութ՟բ լռեար չարախօսացն քոց, և յանձնառեր զկատականս նոցա, շնորհեա ինձ, զի մի անիրաւութ՟ք զրպարտողաց իմոց տառապեցուցեն զիս, և մի սրբազան խորհուրդք քո արհամարհեսցին կատականօք յանօրէն մարդոց. ամէն։

Ի Տաղանայն յորժամ առէ շառերա-
րանն՝ և ըհաստատմն՝ նշանակէ
ըհրէից յետ տանելն ըստ
առ պիղատոս։

Աղօթք։

Տէր իմ յս քս, որ 'ի հերովդէ առ պիղատոս կրկին դարձեալ, զնոսին վերստին բարեկամս լինել կամեցար. շնորհեա ինձ, զի մի երկեայց 'ի թշնամութենէ մարդկան, այլ 'ի թշնամութենէ նց̃ պատուղ ինչ շահեցայց, զի քեզ նմանակից յայսմ լինել կարացից. ամէն։

Քահանայն յորժամ բանայ զսկիհն նշանակէ զհրէից մերկացուցանելն զքս՟ 'ի զգեստուց:

Աղօթք:

Տէր իմ յս՟ քս՟, որ յանձն առեր մերկանալ 'ի զգեստուցդ, զի մերկացեալ մարմնով եւ առաւել գանհարեալ լինէիր վն՟ իմ. շնորհեա ինձ զի կատարելապէս խոստովանելով զմեղս իմ մերկացայց զհին մարդն, եւ զգեցայց ըզնորն, զի մի՛ երբէք գտցես զի[ս] ունայն յառաքինութեանց.
ամէն:

Քահանային ապաշ. դնելն՝ նշանակէ
զչարն ծածկելն ՚ի հրէից ։

## Աղօթք ։

Տէր իմ յս քս, որ յանձն-առեր կապիլ ՚ի սիւնն երբեմն զմեղապարտ, և թոյլ ետուր հրէից զքեզ անողորմաբար գան հարկանել. շնորհեա ինձ, զի յօժարութբ ընկալայց ՚ի քէն զհարուածս գթութե քո, և զի մի երբէք կամեցայց ըզ քեզ գան հարկանել մեղօք իմովք. ամէն ։

Բաղանայն յորժամ ծածկէ զմէջն՝
նշանակէ զտան ծերոց պակէլն
'ի հրէից ։

Աղօթք ։

Տէր իմ յս̃ քս̃, որ վասն իմ ընկալար 'ի գլուխ քո զփշեղէն պսակն, շնորհեա ինձ զի 'ի վերայ երկրի համբերութբ̃ ընդունելով զփորձութիս̃, և զտառապանս, արժանի եղէց քեզ պսակակից լինել յերկինս ։ ամէն ։

Քահանայն յորժամ լուանայ զձեռս
ասէ՝ նշանակէ զպիղատոս լուա
նալն զձեռս, և ասելն,
թէ անպարտ եմ ես յարե
նէ արդարոյս
այսորիկ։

Աղօթք ։

Տէ՛ր իմ յս̃ քս̃ որդի այ̃ կեն-
դանւոյ, որ թէպէտ անմեղ-
դատար առաջի պիղատոսի դա-
տաւորին, սակայն յանձնա-
ռեր զկատականս, և զամ-
բաստանութիւն հրէից. շնոր-
հեա՛ ինձ, զի անմեղութբ̃ կե-
ցից յայսմ աշխարհի, և ոչ
երբէք խռովեցայց՝ յորժամ
զրպարտեսցիմ՝ ի թշնամեաց ի-
մոց. ամէն։

Քահանայն յորժամ դառնայ առ ժողովուրդն, եւ ասէ. Ողջո՛յն ամենեցուն, նշանակէ յորժամ զՂազարոս յարուցեալ եհան զնա̃ առ ժողովուրդն։

## Աղօթք։

Տէր իմ յս̃ քս̃, որ վս̃ իմ մեղաւորիս առաջի հրէից ծաղր լինել յանձնառուեր. շնորհեա՛ ինձ աղաչեմ զքեզ՝ զի մի՛ ունափառութ̃բ հպարտացայց, այլ զի յաւուր յետին ահաւոր դատաստանին կարասցեմ քոյին ամբիծ զգեստուքն զարդարել. ամէն։

Քահանայն լուալով՝ զծայրն ձեռաց, նշանակէ զքս դատապարտեալն ՚ի մահ։

## Աղօթք։

Տէր իմ յս քս, որ վասն իմ յանձնառուեր դատապարտիլ ՚ի մահ խաչին. շնորհեա ինձ, զի և ես վասն սիրոյ քոյ յօժարութեամբ յանձնառուից զամ սաստիկ, և զանողորմ տանջանաց պատիժս, և զի մի զընկերն իմ անզգամութեամբ դատեցայց. ամէն։

Քահանայն յորժամ ցեղապատէ զէէն
դանիս՝ նշանակէ յորժամ քս̃
զխաչն 'ի յուսն բարձեալ
գնայր 'ի գողգոթայ։

Աղօթք։

Տէր իմ յս̃ քս̃, որ վասն իմ մեղաւորիս զխաչափայտն յուսդ բարձեր, շնորհեա՛ զի և ես զխաչն նեղութեց յօժար սրտիւ յանձն առից, և վասն քոյդ սիրոյդ անտրտունջ համբերեցից նոցա. ամէն։

Քահանայն յորժամ դնէ զկեսու ՚ի
վերայ սեղանին, նշանակէ զորոշ
տրումն թէ ոչ դատէ-
րէն ՚ի վերայ դատա
ստանին վերջ-
նոյ։

Աղօթք։

Տէր իմ յս քս, որ հասեալ ՚ի
տեղի խաչելութեան ասացեր
ցլալագին կանայսն, մի լայք
՚ի վր իմ, այլ լացէք ՚ի վերայ
անձանց ձերոց։ շնորհեա ինձ
աղաչեմ զքեզ, զի լացից ըզ
մեղս իմ, և ուսո ինձ զսէր,
և զողորմութին, զի հաճոյ գը
տայց առաջի աչաց քոց։
ամէն։

Քահանայն յորժամ օրհնէ զընծայսն, նշանակէ զքի՟ բևեռելն 'ի վ՟ր խաչին ։

Աղօթք ։

Տէ՛ր իմ յս՟ քս՟, որ վասն իմ 'ի խաչ ելանել կամեցար, բևեռելով ընդ քեզ զմեղս մեր, և զմահ մեր. աղաչեմ զքեզ, բևեռեա՛ ընդ երկիւղ քոյ զմարմինս իմ, զի պահելով զպատուիրանս քո՝ քեզ խաչակից լինիլ արժանացայց. ամէն ։

Ի Քահանայն Բարձրացուցանէ ըզ
Նշխարն՝ Նշանակէ յորժամ 'ի
Վեր Բարձրացուցին զխա
չեալն Քս ։

## Աղօթք ։

ՏԷՐ իմ յս քս, որ վասն իմ
մեղաւորիս յանձնառուեր խա-
չի՟ն 'ի վեր բարձրանալ յեր-
կրէ, աղաչեմ զքեզ՝ բարձ յի-
նէն զսէր, և զցանկութի աշ-
խարհիս, և բարձրացո ըզ-
հոգի իմ 'ի հայիլ միշտ 'ի յերկ-
նային բարիսն, զոր պատրաս-
տեցեր սիրելեաց քոց. ամէն ։

Քահանայն յորժամ բարձրացուցանէ
զսկիհն՝ նշանակէ զհեղումն սբ
արեանն քի ։

## Աղօթք ։

Տէր իմ յս քս , որ 'ի փրկաւոր վէրացդ քո բղխեցուցեր զաղբիւրս շնորհաց , հեղլով զարիւն քո սբ 'ի թողութիւն մեղաց մերոց , շնորհեա ինձ , զի յորժամ ցանկութիւնք մարմնոյ զիս շարժեն 'ի մեղս՝ ապաւինեցայց առ վէրս քո , յորոց զդեղս , և զփրկութիւն ընդունիլ արժանի եղէց · ամէն ։

Քահանայն յորժամ յիշատակէ ննջեցեալս, նշանակէ զաղօթելն ք̅ի ՚ի վ̅է խաչին վասն ազգի մարդկան ։

## Աղօթք ։

Տէր իմ յ̅ս ք̅ս, որ ՚ի վերայ խաչին վասն փրկութեան ազգի մարդկան, և վասն խաչողացն զքեզ աղօթեցեր առ հայր քո երկնաւոր, շնորհեա ինձ ըզհեզ, և զգթած հոգի, զի ըստ օրինակի, և հրամանի քում սիրեցից զթշնամիս իմ, և ՚ի սրտէ բարի արարից ն̅ց․ ամէն ։

Քահանայն յորժամ զհաղորդն բաշ-
խելով տայ, մինչ և մեծ մե-
ղաւորաց, նշանակէ զբար
ձայնին երանելոյ ա-
ւազակին։

Աղօթք։

Տ̃Ր իմ յ̃ս ք̃ս, որ զփառս արքայութեան երկնից շնորհեցեր խաչակցին քում բարի աւազակին, նայեաց 'ի յիս աչօք գթութեան քո, զի 'ի ժամ մահուան իմոյ արժանի եղէց լսել 'ի քէն, որ ես փրկիչ իմ, այսօր ընդ իս լիցես 'ի դրախտին. ամէն։

Վ՛ահանայն առեղանք ընծայը մերն որ
ճանաչէ ընօթին բանան, որ իօ
սեղանոյ յտ 'ի կերպարանսն ։

## Աղօթք ։

Տր իմ յս քս, որ 'ի մէջ այ-
լոց բանից զկուսածին մայրդ
յովհաննու յանձնարարեր, և
զյովհաննէս մօրդ ։ շնորհեա՛
ինձ մծ զթութեդ քո, զի և
ես ընդ քեզ միաւորեցայց կա-
պանօք հրաբորբոք, և փոխա-
րինական սիրոյդ, և 'ի մէջ ա-
լէկոծութեց, և վտանգից աշ-
խարհիս այսորիկ բարութիդ
քոյ զիս պաշտպանեսցէ ։ ամէն ։

Քահանայն յորժամ բերջանէ զերես
գործեալ նշխարին, նշանակէ յոր
ժամ Քս առաքելոցն շնչէր
սբ հոգին.

## Աղօթք.

Տէր իմ Յս Քս, որ վս սիրոյ իմոյ մեռանելով 'ի վերայ խաչին՝ աւանդեցեր զքո զհոգիդ 'ի ձեռս հօր, շնորհեա և ինձ հոգևորապէս ընդ քեզ մեռանիլ, և 'ի ժամ մահուան իմոյ 'ի ձեռս քո աւանդել զհոգի իմ. ամէն.

Քահանայն յորժամ չհան ոչ է ինչ
խարէն արկանէ 'ի սկիհն, նշանս
նէ չէջամն ոչ է 'ի դժոխս։

Աղօթք։

Տէր իմ յս քս, որ խորտա-
կելով զզօրութի մահու և սա-
տանայի իջեր առ արդարսն
'ի դժոխս, և ազատեցեր ան-
տի զհոգիս հարցն սրբոց,
հեղ զզօրութին ածային ա-
րեան քո 'ի հոգիս հաւատա-
ցելոց ննջեցելոց, զի արձա-
կեալք 'ի մեղաց մտցեն 'ի
փառսն յաւիտենականս։
ամէն։

Ի՛ աղանայն յորժամ ասէ՝ Գառն Այ,
նշանակէ զսրբոյն Խաչման 'ի ժամ
մահուանն քնէ Հաան ազանչելեայն
զոր տեսին ։

## Աղօթք ։

ՏԷ՛Ր իմ յ՜ս ք՜ս, որ համբե-
րելով անտանելի տանջանաց
արարեր՝ զի բազումք բաղխե-
լով զկուրծս իւրեանց դառ-
նային, և լային զմեղս իւ-
րեանց. շնորհեա՛ և ինձ ար-
դեամբք չարչարանաց քոց 'ի
խորոց սրտի զղջանալ 'ի մեղաց
իմոց, և մի՛ ևս երբէք ան-
կանիլ 'ի նոյնս. ամէն ։

Բ. ականային ճաշակելն ընթերցմանն է՛
նշանակէ ըստաղօթս է։

Աղօթք։

Տէ՛ր իմ յի՛ս քս՛, որ 'ի նորափոր գերեզմանի ծածկիլ, և թաղիլ կամեցար, տո՛ւր ինձ ըզսիրտ նոր, և զհոգի նոր, զի և ես թաղեալ, և ծածկեալ ընդ քեզ՝ արժանացայց մասնակից լինիլ յարութեան քում։ ամէն։

Քահանայն յորժամ մաքրէ զմա-
պտանն, և զսկիհն՝ նշանակէ զօ
ծումն ոէ̄ մարմնոյն ք̄ի,
և զպատելն ոէ̄
կտաւով։

Աղօթք։

Տէր իմ յս̃ քս̃, որ յետ մա-
հուա̃ն քո յանձնաւոր իւղով
անուշիւ օծանիլ, և ո̃ք կտա-
ւով պատիլ 'ի յովսեփայ, և
'ի նիկոդիմոսէ, տուր ինձ
կարողութի̃, զի արժանի ե-
ղէց ո̃ք հոգւով ճաշակել զա-
մենասուրբ մարմինդ քո։
ամէն։

Քահանայն յորժամ աղօթէ յետ ճա-
շակմանն, նշանակէ զյարութիւնն
յսի :

Աղօթք :

Տէր իմ յս. քս, որ յարուցեալ 'ի մեռելոց 'ի կնքեալ գերեզմանէն կոխելով զզօրութի̃ մահու արտաքս ելեր, շնորհեա ինձ, զի և ես ելանելով արտաքս 'ի մեղաց իմոց նորոգեցայց նորոգութե̃ կենաց, և ընդ քեզ յառնելով արժանի եղէց մտանել 'ի փառսն քո. ամէն :

Քահանայն յորժամ խաչակնքէ զայ
ժողովրդեանն՝ նշանակէ զքսին ե-
րևելն Տեառն, և աշա-
կերտաց իւրոց ։

## Աղօթք.

Տէր իմ յս քս, որ զկնի յա-
րութեան քո թաղուամ սիրով մխի-
թարեցեր զմայր քո, և զա-
շակերտս քո երևելով նոցա.
շնորհեա զի և ես եթէ ոչ
յայսմ աշխարհի, սակայն ՚ի
հանդերձելումն զփառս քո
դէմ յանդիման տեսանել ար
ժանացայց. ամէն։

«Քահանայն յորժամ տայ ողջոյն ա-
ղօթան, նշանակէ զխաղաղութիւն որ
շնորհեաց Քս̃ ընդ առաքելոցն իւր ։

Աղօթք ։

Տէ՛ր իմ յս̃ քս̃, որ զաւուրս քառասուն սիրելաբար շրջեցար ընդ առաքելոց քո, ուսուցանելով նոցա զխորհուրդս հաւատոյ մերոյ, ուսո՛ և ինձ ուղղել զա̃մ զգործս իմ ըստ կամաց քոց, զի մի՛ երբէք խոտորեցայց 'ի ճանապարհաց պատուիրանաց քոց․ ամէն

Ի Բռահմանայն յորժամ տայ ըմպելին կամ շաղաքթեն՝ ասասցէ զայս համ բարջման յերկինս։

Աղօթք։

ՏԷՐ իմ յսն քսն, որ յետ քառասուն աւուրց առաջի աշակերտաց քոց փառաւորապէս համբարձար յերկինս, շնորհեա ինձ, զի վառ սիրոյ քո զաշխարհս արհամարհելով միշտ յաւիտենական բարեացն ցանկացայց, և ընդ քեզ հրճուելով յարքայութեան քում արժանի եղէց. ամէն։

Քահանայն յորժամ օրհնութիւն տայ ժողովրդեանն, նշանակէ զէջումն հոգւոյն սրբոյ 'ի վերայ առաքելոց։

Աղօթք։

Տէր իմ յս քս, որ հաճեցար առաքել յերկնից զհոգիդ քո սբ 'ի վերայ աշակերտաց քոց, որք 'ի միասին աղօթէին, սոյն ջեռ զսիրտ իմ յամ աղաւ֊ ղութէ, որ զի հոգիդ սբ գտանելով զիս իւր արժանի բնակարան՝ զարդարեսցէ զիս պարգեւօք շնորհաց իւրոց։ ամէն։

Ո՛ր, ահանայն յորժամ ընթեռնուս զայե֊
տին ամէնատրանն, նշանակէ զտարո֊
ղութէ՛ աճ՛ հաւատոյն քէ, և զհետա֊
թէին · զոր աւանդէին առաքեալքն։

## Աղօթք։

Տէ՛ր իմ յս՛ քս՛, որ առաքեցեր զաշակերտսն քո քարոզել ա՛մ ազգաց զս՛բ մարդեղութի՛դ քո, և մկրտել զնոսա յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ · շնորհեա՛ ինձ անբիծ պահել զուղղափառ հաւատ քո, զոր ընկալայ 'ի մկրտութե՛ իմում, և զա՛մ պատուիրանս քո յօժարապէս կատարել մինչև 'ի մահ, ո՛պ զի արժանի եղէց 'ի հանդերձելումն զքեզ ընդ հօր, և ընդ հոգւոյդ ս՛բյ օրհնել · ամէն։

## Զղջումն։

Տէր իմ Աստուած յոյժ քեզ զղջանամ և փոշիմանիմ ես բոլորով սրտիւ իմով յամենայն մեղաց իմոց, վասն զի դառնացուցի զամենաառատ բարութիւնդ. և յառաջադրեմ այլ ոչ ևս մեղանչել միջնորդութեամբ քոյին ամենազօր օգնութեանդ. ամէն։

# ՎԵՐՋ։

## Աղօթք սբ̃յն Թովմայի ակուինացւոյ վս̃ ստանալոյ զառաքինութիւնս։

Շնորհեա ինձ մարդասէր Տր̃ զհաճոյս քո փափաքանօք խնդրել, իմաստութ̃բ քննել, ճշմարտութ̃բ ճանաչել. և լիով կատարել 'ի գովեստ և 'ի փառս անուան քոյ։ Կարգեա զգնացս իմ, և զոր խնդրեսն յինէն գործել, տուր ճանաչել և կատարել արժանապէս յօգուտ անձին իմոյ։ Տուր ինձ Տր̃՝ 'ի յաջողութիւնս և 'ի վիշտս անսայթաք լինել, մի 'ի յաջողութիւնս ամբարտաւանիլ, և մի 'ի վիշտս վհատիլ։ Խնդալ ը̃ այն և եթ՝ որ առաջնորդէ առ քեզ, և տրտմիլ յաղագս այնր

միայն

միայն՝ որ հրաժարեցուցանէ
առ 'ի քէն: Քեզ միայն հա_
ճոյ լինել, եւ 'ի քոց սպառնա
լեաց միայն երկնչել: Անար_
գել զա̃մ անցաւորս, եւ սիրել
զքոյս վ̃ս քոյ. եւ զքեզ տ̃ր քան
զա̃մ: Տաղտկալ 'ի խնդուե̃ց,
որ առանց քոյ, եւ ոչ խնդրել
ինչ բաց 'ի քէն: Քաղցրա_
նալ 'ի վաստակս՝ որ վ̃ս քոյ. եւ
ձանձրանալ յա̃մ հանգստե_
նէ՝ որ առանց քոյ: Տուր ինձ
տ̃ր ստէպ համբառնալ առ քեզ
զսիրտս. եւ 'ի յանցանել իմում
առաջադրութ̃բ ուղղութ̃ն
զղջանալ եւ ապաշաւել: Արա
զիս տ̃ր հնազանդ առանց հա
կառակութ̃ն, աղքատ առանց
լքման. ողջախոհ առանց ա_
պականութ̃ն. երկայնամիտ
առանց տրտնջման, խոնարհ
առանց կեղծաւորութ̃ն. զուարթ

առանց ցոփութեան. տրտում ա-
ռանց վհատութեան. հանդարտ ա-
ռանց դանդաղմանց. երագ
առանց թեթեւութեան. երկիւղած
առանց յուսահատութեան. ճշմա-
րիտ առանց նենգութեան. զբարիս
գործել՝ առանց յանդգնութեան.
զընկերս խրատել՝ առանց գո-
ռոզութեան. և շահիլ բանիւ և
օրինակաւ առանց կեղծաւո-
րութեան: Տուր ինձ Տէր սիրտ
զգաստ՝ ոչինչ բազմահոգ խոր-
հրդովք 'ի քէն անջատական.
և վսեմ, յոչինչ անարժան կրից
վայրբերական. և ուղիղ՝ 'ի ճա-
խող մտաց անխոտորնական.
և արի՝ 'ի վշտաց անպարտելի.
և ազատ՝ 'ի թիւր և 'ի բռուն
ախտից աննուաճելի: Շնոր-
հեա ինձ Տէր միտս 'ի ճանա-
չել զքեզ. և զփոյթ՝ 'ի խնդ-
րել զքեզ. զիմաստութիւն 'ի գտա-
նել

նել զքեզ. և զառաքինի վարս՝ 'ի հաճոյ լինիլ քեզ. համբերութ՟ի հաւատարմութ՟բ քեզ սպասելոյ. և յոյս՝ մինչ 'ի վախճան զքև փարելոյ. կցորդ չարչարանաց քոց լինիլ ապաշխարութ՟բ. և յերախտիս քո վայելել յաստի կեանս շնորհօք. և խնդութ՟բ քո զուարճանալ 'ի

հանդերձեալն փառօք.

ամէն.

Նորին աղօթք, ժամն [illegible]-րայ:

Սրբարիչ անճառելի, որ 'ի գանձուց իմաստութ՟ն քոյ զերիս քահանայապետութ՟իս հրրեշտակաց հաստատեցեր, և զնոյն 'ի լուսեղէն խորանսն երկնից հրաշափառապէս դասակարգեցեր. միանգամայն և

զնմ

զմմ տիեզերս վայելչապէս հանդերձեցեր. և որ եսդ ճշմարիտ լուսոյ և իմաստութեն աղբիւր, և գերագոյն նախասկիզբն. հե՛ղ ՚ի խաւարեալ միտս իմ զնշոյլս պայծառութեան. և փարատեա՛ յանձնէ իմմէ զկրկնակի խաւարն ընածին՝ զմեղս և զանգիտութիւն։ Դու որ զլեզուս տղայոց դնես պարզախօսս, վարժեա՛ զլեզու իմ, և լի՛ց օրհնութեան շնորհաց քոց զշրթունս իմ։ Տո՛ւր ինձ զսրութի իմանալոյ. զընդունակութի պահելոյ. զկարողութի մեկնելոյ. զդիւրընկալութի ուսանելոյ. և զառատ շնորհս խօսելոյ։ Կազմեա՛ յարդարեա՛ զմուտս իմ. ուղղեա՛ զգնացս իմ. և կատարեա՛ զելս իմ ՚ի քս յս ՚ի տր մեր. ամէն։

Աղօթք

Աղօթք առ սբ̄ կոյսն Մարիամ Ածա_
ծինն, առ սբ̄ Ածահայրն Յովսէփ,
և առ պահապան հրեշտակն. զի
բարեխօսութբ̄ նորեանց արժանի
առնիցեն նախապատրաստութ̄ հաղոր
ձանելոյ։

Ո՛վ տիրուհի իմ բազմա_
գութ, և ո՛վ յովսէփ, և հրեշ_
տակ իմ պահապան, խոնար_
հաբար աղաչեմ զձեզ, զի վս̄
սիրոյն քն̄ի մի՛ դադարիցէք 'ի
պաշտպանելոյ և 'ի նախախնա
մելոյ զիս 'ի դարանաց և 'ի փոր
ձուե̄ց դիւի՛ն, թէ 'ի ննջման,
և թէ 'ի յարթնութե̄. և մա
նաւանդ արդէն իսկ պատրա_
տիմ առ գթութ̄ի ձեր. զի 'ի
ժամու մահուան իմոյ հասա
նի

նիցէք 'ի յօգնութի՛ն հոգւոյ
իմում. և նախախնամելով
զիս ազատիցէք 'ի ձեռաց բազ
մապատիր գնդից դժնէից դի
ւաց. ո՜ք զի յայնմիկ սարսա
փելոյ և ահեղի ժամու հոգե
վարութե՛ իմոյ զօրացեալ ո՜ք,
և նպաստաւորեցեալ 'ի ձէնջ՝
յաղթօղ գտայց ընդդէմ ըմ-
բռնւոյ թշնամւոյ իմոյ բան-
սարկուին. և զդարանս պատե
րազմաց նորին իսպառ խոր-
տակելով, և զնա գնդաւն իւ
րով 'ի փախուստ վանելով յի-
նէն, արժանաւորիցիմ՝ ըն-
դունելութե՛ խորհրդոց սրբոյ
եկեղեցւոյ: Ու այսպէս 'ի
ձեռն փրկաւէտ խորհրդոյս
այսորիկ վերահաշտելով ընդ
ա՜ն իմոյ յո՜ր քո՜ր արդիւնա-
ւորութեամբ նորա զինու հաւա-
տոյ և յուսոյ պատուպարեալ,
և

և անվտանգ. 'ի նենգութենց
օձային այսոց չարաց զերծա-
նիլ. և երջանկապէս առ ձեզ
'ի լուսեղէն խորանն ամենից
մեզ վերաժամանել. և մշտն-
ջենաւոր սիրել. և փառաւո-
րել ընդ ձեզ զտ՟րն իմ յս՟ քս՟
համնգերձ հարբն և ամենա-
սուրբ հոգւովն 'ի յաւիտեանս.

ամէն.

# ՀԱՄԱՌՕՏ ԿՐԹՈՒ-
# ԹԻՒՆ
## ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ
Դ սփոփմանս հոգւոյ քա-
ղարանին։

## ԽՐԱՏ
առ ընթերցողս։

Յ[illegible] առաջեմս ընթեր-
ցողդ ողջոյն քեզ մա-
րխամ. մի՛ [illegible] նոյա
ամենեցուն, որք կարդա-
ցեն զմէջ կրթութեան զայս. եւ զմտաւն՛ [illegible]
այնոցիկ, որք առաւանձին ընտեղանակաւ
գործածելով [illegible] ՚ի հրապա-
րակել [illegible] զգործս զայս [illegible]։
Այն որոց [illegible]

քան զնա յորդորեսցեն առ այս, յայսմ
կեցցէ. զի Թէ այնոցիկ, որք զայն
կրԹուԹե ՚ի կիր առնուն՝ հասեալ
է վիճակս ցայսօր առնելի քան զբաւան
ճիւղս. ուստի երախտաւորեալ որ ՚ի
նոցանէ հայելէ օր ըստ օրէ յառ-
ջեւան այնչափ ողջոյնեց։



# ՅՈՐԴՈՐԱԿ

## Առ ամ̃ երկրաւորս այս։

Տանջելին խստագոյնս զմ̃ քնասէր եղբայր, անհամար հոգւք 'ի հուրքաւարանին, հեռացեալք 'ի ծայրագոյն բարւոյն, որում միայնոյ անձառ տենչանօք փափաքին։ Այլ են դասերք և հարսունք երկնաւոր փեսային, սիրեցեալք յոյժ յաղագս սիրոյն, որով փոխեցան 'ի կենաց աստի։ Բայց դեռ պարտապանք ա̃ծային արդարութեան վ̃ն ժամանակեան պատժոյ, որ մեղայ ն̃ց արժանահաս, բայց յաստիս ոչ վճարեալ։ Եւ զի անձամբ անձին այլազգ հատուցանել տկարանան, բայց եթէ կրելով զտանջանս, վ̃ն այսորիկ անհնար է ն̃ց ելանել անտի

մինչև են վճարեալ տանջա-
նօք զպարտիս իւրեանց, ըստ
այնմ թէ. Ոչ ելանիցես անտի,
մինչև հատուցանիցես զյետին նաքա-
րակիտն. Մատ. Ե. 6:

Ո՛վ ամենայաղագս սիրոյն, ո-
րով զնոսա և զքեզ սիրէ, հաճե-
ցաւ, զի դու յօգնութ նոցա և
քեզ յարդիւնս կարօղ լինիս
յաստի կեանս մատուցանել
յօժանդակութիւն նոցա զար-
դիւնս և զարիւնն Յիսուսի Քրիստոսի առ
'ի փրկել զնոսա յանհնարին տան-
ջանաց անտի: Ապա մի՛ զր-
կեր զնոսա յայսմ օգնութենէ,
և մի՛ զքեզ յայսպիսի ար-
դեանց: Ո՛չ անցցէ առ քե-
օր, առանց յարդելոյ զգանձս
զայս մեծագին առ 'ի ազա-
տել զնոսա: Շարժեսցէ զքեզ
հաճութիւն, զոր տացես այ-
սմիկ Այ, որ այնչափ սիրէ
զնոսա

զնմ ։ Տ արժեսցեն զքեզ ՚ի
յաւակցուի տանջանքն , զոր
կրեն հոգիք ընկերայ քոյ ,
թերեւս եւ ազգականաց քոց ,
եւ սիրելի բարեկամաց , ՚ի յա–
ւակցուի՝ զոր եկեացէ օր՝ յո–
րում դուցէ ՚ի վուր խնդրես–
ցես վն քո , եթէ դու ոչ յու–
ցեր զայն վն նց ։ Տ արժես–
ցեն զքեզ ուժգին պատա–
տանքն , զոր մատուցեն վն
քո՝ մանաւանդ ՚ի ժամանել
նց քոյին միջնորդութե ՚ի
փառս , ուստի եկեսցեն քեզ
աներկեան մեծամեծ բարու–
թիք , եթէ առժամանա–
կեայք , եւ եթէ հոգեւորք եւ
յաւիտենականք ։ Ամենեցուն
օժանդակեա՛ , զի ամենեքին
են արժանաւոր ․ բայց յամե–
նեցունց մարթ է քեզ օր
ըստ օրէ ընտրել զայն , որ

քեզ ցուցեալ լինի, 'ի սակս պատճառաց՝ զոր դու իւրաքանչիւր օր եօթնեկին համառօտիւ գտցես նշանակեալ։ Օ այս ինչ ունիմ ասել քեզ, զի համառօտ կրթութիւս այս ջերմ սրտիւ հանապազօր անթերի կատարեալ՝ պտղաբերեաց բազմաց. Նաև յՏ՟է սաստ, զմեծամեծ շնորհս. զոր նոյնգունակ և քեզ ըղձանամ. ողջ լեր։



# ԿՐԹՈՒԹԻՒՆ
## ՎԱՍՆ ԿԻՒՐԱԿԷԻ:

Աղաչեմ զքեզ Հայր հոգւոյ ջատագովա-նին, և մանաւանդ Հայր այնորիկ, զոր նա ընչն ձանձրալէ տառապել ջան պատճենաւեան լսելով զուարճ 'ի մանաւոր օծանդակութեէ: Նշա-նեէ յայսմ աւուր հաղորդեցայս ուր խորհրդոյն՝ հղեցմ զայն 'ի ականջանս ներ

## ՊԱՏՃԱՌ:

Քանզի որչափ ա-ռաւել մեծ է կարօտութիւն ներ, այնչափ յաւէտ եղիցի քեզ նա շնորհապարտ վասն երախ-տեացն

տեսայն, և խնդրեսցէ վն քոյ յոյ, զի ոչ նալքցէ զքեզ երբէք բարձմամբ շնորհաց իւրոց, և ոչ դու թողցես զնա երբէք յանցանօք քո։

Աղօթք։

ՏՐ ած ամենակալ, մաղթեմ 'ի քէն վասն պատուական արեանն, զոր ածորդին քո յն եհեղ 'ի պարտիզին, ազատեա զհոգիս քաւարանին, և առանձինն 'ի մէջ ամենեցուն զայն, որ առաւել լքեալն է. ժամանեցո զնա 'ի փառս քո, ուր բարեբանելով օրհնեսցէ զքեզ 'ի յաւիտեան. Ամէն։

Հայր մեր, Ողջոյն քեզ. 'Ի խորոց կարդացի։

# ՎԱՍՆ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ.

*Աղաչեսցե՛ս զՔծ յաւիտեանս վս հոգ-ւոյն, որ առաւել մերձ է ելա-նել 'ի տառապանէն:*

## ՊԱՏՃԱՌ:

Քանզի այնչափ առաւելա-գոյն եռանդեամբ անձ-կայ նա միանալ ընդ այ, որչափ առաւել հուպ է յաւարտ իւ-րոց տանջանաց: Ա՛ղէ 'ի բաց արա դու առ 'ի նմանէ զամ զկրծիմն. և նա փոխա-րէն մեծի պարգևացդ առ-ընկալցի քեզ զշնորհս խզելոյ իսպառ զնոքէն յօդակապսն, որք տակաւին արգելուն ըզ-քեզ նուիրել զանձն քո բոլո-րովին այ. զորմէ գուցէ կա-խեալ կայ փրկութիւն քո յա-ւիտենական:

Աղօթք։

Ած ամենակալ, մաղթեմ 'ի քէն վն պատուական արեանն, զոր ած որդին քո յս՝ եհեղ 'ի գանակոծ լինիլն իւրում, ազատեա՛ զհոգիս քաւարանին, և առանձին 'ի մէջ ամենեցունց՝ զայն, որ առաւել մերձ է մտանել 'ի փառս քո. ոպ զի վաղվաղակի սկիզբն արասցէ օրհնել զքեզ և գովել 'ի յաւիտեան. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն քեզ. Ի խորոց։

## ՎԱՍՆ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ։

Աղաչեմ զքեզ յառաջադէս Տր այնց հոգւոյ, որում ըստ առաջնէնայ արտաբերութիւն՝ պարտ էր հասնե ցնդոյ քան զքոյն ելանել 'ի քաւարանէն։

### ՊԱՏՃԱՌ։

Ի քումն, և խորին խոնարհութեն, որով անկեալ կայ նա ընդ այնպիսի երկաբատև տանջանօք՝ յորդոր լիցին քեզ 'ի կարծել զանօգութին նց։ Ոչ թէ որչափ եղիցի քեզ նա շնորհապարտ։ Ի՞րանի՞ է քեզ, եթէ մաղթեսցես վն քոյ 'ի տնէ զշնորհս սիրելոյ յաստուխ խոնարհութեն զյետին տեղիս, ոչ զի բարձրացիս առ յոյն 'ի հանդերձեալն։

Աղօթք ։

Տ՟Ր ա՟ծ ամենակալ . մաղթեմ 'ի քէն վ՟ն պատուական արեանն, զոր ա՟ծորդին քո յ՟ս եհեղ 'ի դառնակսկիծ փշովք պսակին իւրում, ազատեա՛ զհոգիս քաւարանին , և առանձինն 'ի մէջ ամենեցուն զայն , որում պարտ էր հուսկ յետոյ ելանել յայնչափ տանջանաց անտի . որպէս զի մի՛ յապաղեսցէ բարեբանել զքեզ 'ի փառսն քում , և օրհնել զքեզ 'ի յաւիտեան . ամէն ։

Հայր մեր . Ողջոյն քեզ . 'Ի խորոց ։



ՎՐԱՄԵ

# ՎԱՍՆ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ։

Աղաչեա՛ զԱծ մնաւորապէս վսն հոգւոյն, որ առաւել ծոյլ է աղօթեամբք։

## ՊԱՏՃԱՌ․

Բանզի հոգւին այն առաւել սիրէ զԱծ, և գեր քան զամենեսեան սիրեցեալ է առ յԱյ ։ Որչափ գերագոյն եղիցին յերկինս փառք նր․ այնչափ ազդողագոյնս մաղթեսցէ վն քոյ զՃշմարիտ սէրն Այ ՚ի վեր քան զԱմ ինչ․ առանց որոյ չէ՛ք ճշմարիտ արդիւնք, և ո՛չ իմիք կարես ակն ունիլ, բայց եթէ յաւիտենական մահուա՛ն։

## Աղօթք։

Տր ած ամենակալ . մաղթեմ՝ ի քէն վն պատուական արեանն, զոր ածորդին քո յն եհեղ Ը հրապարակս եէմի մինչ բարձեալ տանէր զխաչն 'ի վերայ սրբազան ուսոց իւրոց, աղաչեմ զհոգիս քաւարանին, և տիրամ զայն, որ առաւել ձոխ է արդեամբք առաջի քո . որպ զի 'ի գերագոյն փառս՝ որ 'նմա հանդերձեալ ենայ, գովեսցէ զքեզ բարձրաձայն, և օրհնեսցէ 'ի յաւիտեան . Ամէն։

Հայր մեր . Ողջոյն քեզ . 'Ի խաչին։

# ՎԱՍՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ։

*Աղաչեա՛ զՏր մասնաւորապէս վն այնր հոգւոյ քաւարանին, որ առաւել ջերմեռանդն եղև ամենասրբ խորհրդոյ հաղորդութեան։*

## ԳԱՏԺԱՌ։

Քանզի յոյժ սիրելի է նա յԱյ այսօրինակ հն մերոյն քն. ուստի ժտեսցէ 'ի նմանէ անդադար տալ քեզ զշնորհս ընդունելոյ զնա արժանապէս 'ի կենդանութեան և 'ի մահուան՝ առ յապահովագրական յաւիտենից փրկութեան քո։

Աղօթք ։

ՏՐ ա̃ծ ամենակալ, մաղթեմ 'ի քէն վ̃ն պատուական մարմնոյ և արեան յի̃ ա̃ծորդւոյ քո, զոր նա ինքն յառաջնում գիշերի չարչարանաց իւրոց ետ 'ի կերակուր և յըմպելի իւրոց սիրելի աշակերտաց, և եթող համօրէն եկեղեցւոյ իւրում 'ի մշտնջենաւոր պատարագ և 'ի կենդանարար կերակուր իւրոց հաւատացելոց, աղաչեմ զհոգիս քաւարանին, և մանաւանդ զառաւել ջերմեռանդն խորհրդոյս անեզրական սիրոյ՝ ո̃մ զի սովիմք բարեբանեսցէ զքեզ ընդ որդւոյ քում միածնի, և ը̃ ս̃բյ հոգւոյդ 'ի փառս քո 'ի յաւիտեան. Ամէն ։

Հայր մեր. Ողջոյն քեզ. 'Ի խորոց ։

[illegible]

## ՎԱՍՆ ՈՒՐԲԱԹՈՒ:

Աղաչեմ զքեզ ծառայութեամբս վասն այնոց հոգւոց քաւարանին. որոց վասն առաւել պարտական եմ աղօթս առնելոյ:

## ՊԱՏՃԱՌ:

Նոյն իսկ պարտաւորութիւն քո է ստիպողագոյն պատճառանելոյ զայս: Եւ եթէ ՚ի բանիս յայսմիկ ունիս զպարտս արդարութե, զոր գիտես, մի յապաղեր հատուցանել զայն, զի մի անկցին ՚ի վերայ քո ահագին վրէժխնդրութիւն տեառն, զորոյ և յաստի կեանս ունիմք զսարսափելի օրինակս:

* * *

Աղօթք։

Տէ՛ր Աստուած ամենակալ․ մաղթեմ 'ի քէն վասն պատուականն արեանն, զոր Աստուածորդին քո յոյժ յայտմ աւուր եհեղ 'ի վերայ խաչին, մանաւանդ յամենասուրբ ձեռաց և յոտից իւրոց, ազատեա՛ զհոգիս քաւարանին, և տիրապէս զայնոսիկ, որոց վասն՝ ուսանել պարտական եմ աղաչել զքեզ, ոչ զի մի՛ լիցի վասն իմոց յանցանաց չյերածել զնոսա վաղվաղակի առ 'ի գովել զքեզ 'ի փառսն քում, և օրհնել 'ի յաւիտեանս․ Ամէն։

Հայր մեր․ Ողջոյն քեզ․ 'Ի խորոց։

# ՎԱՍՆ ՇԱԲԱԹՈՒ.

Աղաչի՛մ զԱծ մասնաւորապէս վն այնր հոգւոյ քաւարանէն, որ առաւել ջերմեռանդն եղև ամենա՛բ կուսին :

## ՊԱՏՃԱՌ.

Բանզի այսու մեծապէս հաճեսցես զկոյսն Մարիամ. որոյ ստիպեալ 'ի հայցուածոց այսր հոգւոյս յիւրմէ 'սիրեցելոյ, առընկալցի քեզ զշնորհս լինելոյ հաստատութե՛ ջերմեռանդ նորին, ուստի և յապահովս առնելոյ ընդ խնամօք պաշտպանութե՛ նորա զփրկութի՛ քո յաւիտենական :

Աղօթք.

ՏՐ ա̃ծ ամենակալ, մաղ-
թեմ 'ի քէն վ̃ն պատ-
ուական արեանն, որ բղխեաց
'ի կողէն յ̃ի ա̃ծորդւոյ քո 'ի
տես աչաց, և 'ի կսկիծ ան-
տանելի՝ ամենամաքուր մօր իւրոյ,
ազատեա՛ զհոգիս քաւարանին,
և առանձինն 'ի մէջ ամենեցուն
զայն, որ եղև առաւել ջեր-
մեռանդն մեծի տիրուհւոյս
ո̃մ զի խոկ և խոկ ժամանես-
ցէ 'ի փառս քո՝ առ 'ի գովել
զքեզ 'ի նմա, և գնա 'ի քեզ
զա̃մ յաւիտեանս. Ամէն:

Հայր մեր. Ողջոյն քեզ. 'Ի նորոգ.

Սաղմոս ։ ՃԻԹ ։

Ի խորոց կարդացի առ քեզ
Տէր, Տէր լուր ձայնի իմում ։
Եղիցին ականջք քո, 'ի լսել
զձայն աղօթից իմոց ։
Թէ զանօրէնութիւս քննես
Տէր, Տէր ո՞ կարէ կալ առա-
ջի քո, զի 'ի քէն է քաւութիւն ։
Անուան քո համբերի Տէր,
համբեր անձն իմ բանի քում,
յուսացաւ անձն իմ 'ի Տէր ։
'Ի պահէ առաւօտու մինչև յե-
րեկոյ, 'ի պահէ առաւօտու յու-
սասցէ Իսրայէլ 'ի Տէր ։
Զի Տէր է ողորմութիւն բազում
և 'ի նմանէ է փրկութիւն, և նա
փրկեաց զԻսրայէլ յամ նե-
ղութեց նորա ։
Փառք Հօր, և այլն ։

ՀՄ
Гос. Библиотека

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

կանոնս և մաղթ[illegible]
Զի [illegible]
[illegible] յօժարութեամբ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

f1

[illegible]

200